## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀԱՄՄՀՋ-ԳՀԱՊՁԲ-25/6 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր** **19 սեպտեմբերի 2025թ.**

2025թ սեպտեմբերի 19-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գյուղ Նորապատ, 5-րդ փողոց, թիվ 11 շենք հասցեում գտնվող «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ջրամատակարարում» ՀՈԱԿ-ի շենքում տեղի ունեցավ ջրաչափերի ձեռքբերման նպատակով ՀՀԱՄՄՀՋ-ԳՀԱՊՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Թ. Ավետիսյան ՝ «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ջրամատակարարում» ՀՈԱԿի փականագործ,
Ա. Առաքելյան ՝ «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ջրամատակարարում» ՀՈԱԿի գործավար,
Հ. Մկրտչյան ՝ «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ջրամատակարարում» ՀՈԱԿի եռակցող :

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Թ. Ավետիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը՝ «ՓՐՈՄՈՒՈՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1.Ընթացակարգի փոփոխված հայտարարության և հրավերի տեքստերը հաստատելու մասին:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՏԵՔՍՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց Ընթացակարգի փոփոխված հայտարարության հայերեն, ռուսերեն և անգլերեն տեքստերի

նախագծերը և փոփոխված հրավերի հայերեն և ռուսերեն տեքստերի նախագծերը՝ կից ներկայացված համապատասխանաբար՝ N1, N2, N3, N4, N5 հավելվածները.

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հաստատել Ընթացակարգի փոփոխված հայտարարության հայերեն, ռուսերեն և անգլերեն տեքստերի նախագծերը և փոփոխված հրավերի հայերեն և ռուսերեն տեքստերի նախագծերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Ընթացակարգի Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը սահմանել համապատասխանաբար Ընթացակարգի փոփոխված հրավերի և հայտարարության տեքստերում նշված օրը և ժամին, ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գյուղ Նորապատ, 5-րդ փողոց, թիվ 11 շենք հասցեում գտնվող «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ջրամատակարարում» ՀՈԱԿ-ի շենքում:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Թ. Ավետիսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Առաքելյան ____________

Հ. Մկրտչյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________